

2186

2/1/1914

1/1/1914

1914

201

21-78

04/1803 AUG 2009/1915 № 689

ՀԱՆՐԱՇԱՀ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1

ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Գ Ր Ա Ն

Վ. Միխայելեանց:



ОРИЕНТАЛИСТИЧЕСКИЙ
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

201

5-78

Տ Պ Ա Ր Ա Ն

Յ. լուկանցի, Երևանում

1914

201
5-78



ЕГОС. Г.О. 50
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ.

Կարգալ կարգով ԾՆՆ. ք. 4. ա. 1-10. ք. 5, 6. ա.
11-26. ք. 7-17, 19, 20, 18, 21-24. ա. 27-30. ք. 25
ա. 31. ք. 1-3:

1. Նիւրը.

Գլ. ա. 1: „Սկզբում Աստուած ստեղծեց երկինքը և երկիրը“: Այս նախադասութեան գլխաւոր անդամներն են Աստուած և ստեղծեց. առանց այդ բառերի ոչ միայն նախադասութիւնը կը զրկուի իմաստից, այլև ամբողջ տիեզերքը կը մնայ իբրև անլուծելի առեղծուած: Ուրեմն երկինքը և երկիրն սկիզբուն են և նիւր կոչուածը ՚ի յաւիտենից չէ: Աստուած ամեն բանից առաջ մեր տիեզերքի աստղալստի կազմող նիւթն ստեղծեց, որից յետոյ կազմուեցին մեր տեսանելի երկինքն ու երկիրը միաժամանակ և միևնոյն նիւթից: Բայց թէ այդ սկիզբը (նիւթի թուականը) մեզանից որքան ժամանակ առաջ է, գորա մասին լուծէ Ս. Գիրքը:


2. Նիւրի նախնական վիճակը.

Գլ. ա. 2: Երկնային մարմինների ստեղծագործութիւնը մի կողմ թողնելով՝ Սուրբ Գիրքը նկարագրում է մեր երկրի յաջորդական վիճակները: Նախ ասում է թէ՝ «Երկիրն անձե էր»: այսինքն՝ այն նիւթը, որից կազմուեց մեր երկիրը, տակաւին անկերպարան և անտարազ վիճակումն էր: Անձե էր, ուրեմն անշօշափելի և անզգալի էր. որովհետև ձեռն յատուկ է շօշափելեաց: Ոչ միայն ձե չունէր այն ժամանակ, այլև յաւիտեան անձե մնալու դատապարտուած մի մեռեալ վիճակ էր: Կշիռ չունէր, ամենատարրական բարդութիւններէ զուրկ էր և վերլուծումն անկարելի: «Դատարկ էր». այսինքն՝ ներկայ իրերից, ուժերից և երևոյթներից բոլորովին զուրկ էր. ոչ միայն զուրկ էր, այլև այդ բաներն արտադրող որեւէ ուժ, կամ իւր ներկայ վիճակը փոխելու ինչնիցէ միտում (էներգիա) անգամ չունէր: Բացարձակ անգործ էր ու դատապարտուած յաւիտեանական մեռելութեան. ուրիշ խօսքով՝ բովանդակ տիեզերքում տիրում էր պատշաճութիւն (անգործութիւն): «Սաւար էր»: Որովհետև լոյսը շարժման արդիւնք է, իսկ մեր երկիրը իւր նախնական վիճակում գործունէութիւնից զուրկ էր (զատարկ էր), ուստի և լոյս չկար այդ ժամանակ ամբողջ տիեզերքում, այդպիսով զգուշացնելով: Այժմեան

ճանաչուած անսահման միջոցը (անզուեղը) այն ժամանակ ծածկուած էր թանձր խաւարով: Ուրեմն՝ նախ քան սկիզբն՝ բացարձակ ոչնչութիւն. յետոյ Աստուծոյ խօսքով ստեղծուեց նիւթը իւր գրաւած միջոցով—անզուեղով—հանգերձ, որն «անձե էր, դատարկ և խաւար»: Շօշափելի նիւթի նախնական վիճակն անշօշափելի շոգին (զազ) է. և որովհետև երբայեցիք շոգիներին (զազ) ջուր էին ասում, այդ պատճառով էլ այնտեղ գրուած է. «Աստուծոյ Հոգին շրջումէր ջրերի (անշօշափելի զազային նիւթի) վրայ»: Սա մարդկային բացատրութիւն է և նշանակում է թէ Աստուած նախնական նիւթի համար ծրագրումէր ձե, կեանք, կշիռ, օրէնք, կարգ են: (Հիմա էլ զազերը կոչւում են ատաճակաւ հեղուկներ):

3. Ուժը.

Գլ. ա. 3. 4. 5: «Լոյս լինի»: Լոյսը շարժման արդիւնք է: Ս. Գիրքը փոխանակ պատճառի՝ արդիւնքն է յիշում. փոխանակ ասելու, թող լինի լոյս արտադրող ուժը, ասում է. «Թող լինի լոյսը»: Ուրեմն մեռեալ նիւթից յետոյ առաջին ստեղծուած բանը ուժն է՝ շարժման պատճառը, նիւթի կեանքը և հոգին: Ուստի՝ «Լոյս լինի» ասածին պէս՝ նիւթին արւում է ֆիզիկական կեանք-ուժ, որն իշխում և կառավարում է տիեզերքի բո-



լոր երևոյթները: Մեռեալ նիւթը դատարկութիւնից անցնումէ գործունէութեան և մի ակնթարթում տիեզերքի անհուն անջրպետը (անգունդը) լցւումէ գործունէութեամբ-ամեն-նուրեք շարժմամբ: Շարժումը գործունէութեան յայտարարն է: Նիւթն ստանումէ «ձև» և ձև առնելու միտում (էներգիա): Նիւթն այդ կէտից սկսած կշիռ ունեցաւ. պարզ համարուած տարրերի գոյութիւնը, ինչ-պէս և նորանց քիմիական խնամութիւնն՝ այդ ժամանակից սկսեց: Տեղ տեղ նիւթի պարզ հիւլէները (ատոմ) կազմումեն ուժի կենդրոն, որոնց շուրջն սկսումեն թաւալել նոյն նիւթի անագին զանգուածներ: Միաժամանակ առաջ են գալիս ծանրութեան, մագնիսականութեան, էլէկտրականութեան, ձգողութեան և այլ երևոյթներն իրրեւ միևնոյն սկզբնական ուժի արդիւնք կամ երևոյթ: Շարժումը մի ակնթարթում առաջ բերեց նիւթի ժասնիկների մէջ ընդհարում, խտացում, վանում, որից առաջացաւ ջերմութիւն և հաղորդուեց թանձր նիւթին: «Լոյսը բարի էր». այսինքն՝ ստեղծագործութեան նպատակին բոլորովին յարմար: «Լոյսը խաւարից ջոկեց». այսինքն՝ դատարկութեան և գործունէութեան զաղափարն առաջ եկաւ: Մեր երկիրն այդ կէտից սկսեց թաւալելիւր առանցքի շուրջը, զարձնելով դէպի արե-

գակը երբեմն մէկ՝ երբեմն միւս երեսը. և որովհետեւ մեր երկրին լոյս պատճառողն արեգակն է, թրթռացնելով եթերը, ուստի և տեղի էին ունենում «երեկոյ և առաւօտ (երեկոներ և առաւօտներ) օր առաջին»: Ուրեմն՝ առաջին օր կոչուած ժամանակամիջոցում գոյութիւն ունէին ցիւր և ուժ, երկուսն էլ ստեղծուած: Նիւթի և ուժի ստեղծագործութեան մէջ իրարմ ժամանակ անյաւ՝ Ս. Գիրքը չի յայտնում:

Մեր փորձառութեան ներկայ պայմաններում նիւթը և ուժն անբաժան են: Եթէ մեզ հնար լինէր բուն նիւթից զատել, չ'էզոքացնել ուժը, այն ժամանակ երկուսն էլ մեզ համար կըդառնային իրականութիւնից զուրկ բաներ: Հիմա չ'ունենք մի նիւթ, որի հետ անբաժան կերպով միացած չ'լինի ուժը: Օրկ. մեր առաջը դրած մի փայտի կտոր դեռ բոլորովին նիւթ չէ. եթէ նորանում թագնուած այն բանը, որին ուժ ենք ասում, զատենք նորանից, այն ժամանակ միայն կ'ստանանք բացարձակ նիւթը, որն անմիջապէս կ'անհետանար մեր տեսութիւնից և փորձառութեան սահմաններից: Հետևապէս բուն նիւթի մասին առանց ուժի և ուժի մասին առանց նիւթի միացման՝ ոչինչ չ'գիտենք և թերեւ երբէք չենք կարող գիտենալ: Թէ բացարձակ նիւթը և թէ

ուժը (փրկիկական) իրական զայացութիւնն ի
 են, բայց մեր ներկայ կարողութեամբ ան-
 սահմանելի: Թէ նիւթը և թէ ուժը մի են,
 թէ և հաղարաւոր տարբեր երևոյթներով
 են մեզ ներկայանում: Ներկայումս, թուի
 թէ, գիտութիւնն հակամէտ է ընդունել իբրև
 ստուգութիւն, որ նիւթը կարելի է վերա-
 ծել էլէկտրականութեան և ընդհակառակն.
 այսինքն՝ էլէկտրականութիւնը նիւթէ: (Տես
 «Մշակ» 1913 № 73 և «Աւետարեւ» 1910,
 թիւ 49): Եթէ մեր երկիրն, ինչպէս առհա-
 սարակ կարծւում է, ունեցել է հրային վի-
 ճակ, դա եղել է միայն ուժի ստեղծումից
 յետոյ և «օր առաջին» կոչւած ժամանա-
 կամիջոցում: Բայց մենք աւելի հակամէտ
 ենք ընդունել, որ «երկիրս ջրից և ջրով է
 հաստատուած»: Անստեանելի և անդգալի
 հեղուկից՝ նախաստեղծ միասեռ նիւթից:

4. Մընուրսը.

Փյ. ա. 6, 7, 8: «Հաստատութիւն լի-
 նի»: Որովհետև հաստատութիւն կոչւում է
 այն կապոյտը, որին երկինք է կոչւում Ս.
 Գիրքը, իսկ այդ կապոյտը հիմա գիտենք,
 որ մեր Մընուրսն է, ուրեմն Աստուած մեր
 միջնորդն ստեղծեց «երկրորդ օրը»: Այս-
 ինքն՝ արդէն եղած նիւթից, ուժի ներդո-
 ւութեամբ՝ մեր միջնորդը որոշ կարգի և

բաղադրութեան բերեց. օդի տեսակարար
 կշիռը սահմանեց, այնպէս որ նորանից ծա-
 նըր մարմինները նորա ներքեւում գտնուեն,
 իսկ նորանից թեթեւները՝ նորա մէջ լողան:
 Նաև նորա տարրերի ճիշտ յարաբերութիւնը
 սահմանեց և շնչելու յարմար վիճակին վե-
 րածեց: (Օդը գազերի մեքենական խառ-
 նուրդ է և ոչ քիմիական. $\frac{1}{5}$ բորակածին և
 $\frac{1}{5}$ թթուածին՝ ծաւալով, 79⁰/₁₀₀ բորակածին
 և 21⁰/₁₀₀ թթուածին՝ քանակով, 76,8⁰/₁₀₀ բո-
 րակածին, 23,1⁰/₁₀₀ թթուածին և 0,1⁰/₁₀₀ այլ
 նիւթեր՝ կշռով):

Ուստի հեղուկ ջրերն, իբրև ծանր
 մարմիններ, հաստատութեան տակ իջան.
 իսկ շոգի ջրերն (ամպերը) հաստատութեան
 վրայ կանգնեցին և այսպիսով հաստատու-
 թիւնը (օդը) բաժանեց ներքևի ջրերը վե-
 րևի ջրերից: Սա պատճառ եղաւ օդի մաք-
 րութեան և պարզութեան. միջոցի խոնա-
 ւութեան մի խոշոր մասը հեղուկ ջուր
 դարձաւ ու ծածկեց երկիրը: Արեգակի լու-
 սըն աւելի շատ թափանցեց և ջերմութիւնն
 առատացաւ երկրի վրայ. որովհետև ջուր
 դարձած շոգիները դուրս տուեցին իրանց
 աւելորդ ջերմութիւնը և հաղորդեցին մթ-
 նոլորտին: Մթնոլորտը՝ պարզուեց, բայց
 դեռ երկնային մարմիններն անտեսանելի
 էին երկրի վրայից թանձր շոգիների պատ-

ճառով, որոնք գնալով հետգհետէ պարզուում էին: Նոյնը տեղի էր ունենում միաժամանակ և երկնային մարմիններին պատկառելով մթնոլորտում, եթէ միայն ունէին: Առաջին անգամ հասկացողութիւն տեսանելի երկնակամարի (հաստատութիւն), ջրի և ամպի մասին: Մթնոլորտային բոլոր օրէնքների յարգարումը որքան տեսց՝ Ս. Գիրքը չի պատմում:

5. Յամափր.

Գլ. ա. 9,10: «Յամափր երեայ»: Եթէ հիմա բոլոր լեռները, բլուրները և բարձրութիւնները տեղաւորենք լճերի, ծովերի և ովկիանոսների մէջ և միաժամանակ բեւեռների ձիւնն ու սառույցն հեղուկ ջրի վերածենք, բոլոր ցամաք ջրով կը ծածկուէր և երկիրը կը դառնայ մի հարթ հաւասար գունատ, պարփակուած ջրով: Մեր երկիրը ժամանակով բոլորովին այսպէս ծածկուած էր ջրով: Աստուած հրամայեց ցամաքը երկայ և ջրերը որոշ տեղեր հաւաքուեն. այսինքն՝ երկրաբանական ցնցումներ տեղի ունեցան: Երկրի որոշ մասերը բարձրացան, իսկ միւս մասերն իջան. ուրիշ խօսքով՝ լեռները և ծովերի խորութիւնները կազմուեցին. ցամաքը երկայ և ջրերն հաւաքուելով երկրի ձեղքուածների մէջ՝ ծովերն

առաջացան: Յամաքը երկիր՝ իսկ ջրակոյտը ծով կոչուեց. այսինքն՝ ծովի և ցամաքի զաղափարը ծնաւ: Մինչև այս կէտը դեռ անձրև կոչուած երևոյթը տեղի չէր ունեցել երկրի վերայ, այլ երկրից շոգի էր բարձրանում և դարձեալ այնտեղ նստում ու այսպիսով ոռոգում հողը (բ. 5, 6): Ո՛րքան ժամանակ պահանջեց ցամաքի կազմուիլը՝ (խաւերի շերտաւորումը) Ս. Գիրքը չի յայտնում:

6. Կեանփր (բոյսեր).

Գլ. ա. 11-13: «Երկիրը խոտ բուսցնէ»: Մեր երկիրը իւր ցամաքով, ջրով և մթնոլորտով ու սորանց առմիմեանս ունեցած յարաբերութեամբ արդէն պատրաստ էր կեանք ընդունելու և պահպանելու: Բոյսը գործարանաւոր մարմին է. ուրեմն մի նոր բան ստեղծուեց, որ մինչև այժմ չ'կար: Մինչև այդ ժամանակ նիւթի վրայ գործողը ֆիզիկական ուժն էր. բայց հիմա մի նոր բան (սկզբունք) է մէջ մտնում, որին ասում ենք կեանք: Կեանքը երրորդ բանն է, որ ստեղծեց Աստուած: Ոչ նիւթի, և ոչ էլ ուժի, ոչ էլ դորանց միացեալ գործունէութեան մէջ՝ չ'կար կեանք ասուած բանը. ոչ էլ կարող էր դարերի հոլովմամբ ստեղծուել որևէ նպաստաւոր պայմաններում առանց

Աստուծոյ նոր «եղիցի»-ի: Քիմիական կամ մեքենական սրպիսի խառնուրդ ուզում էք ենթադրեցէք և սրքան անգամ ցանկանում էք կրկնեցէք, սակայն՝ կեանք երբէք չէք կարող առաջ բերել: Զօրութիւնը միայն շարժում և նորան յարակից երևոյթները կարող է առաջ բերել նիւթի մէջ, բայց ոչ երբէք կեանք: Ինչ է կեանքն իր ծագմամբ բոս ինքեան՝ զաղտնիք է և կը մնայ զաղտնիք, ինչպէս զաղտնիք են նիւթը և ուժն իրանց՝ նախնական վիճակում: Բոյսերն ստեղծուեցին ըստ տեսակի: այսինքն՝ այն նախնական տեսակները, որոնք ուրիշ տեսակներից չեն առաջացել: Ամեն տեսակ իւր սեռի կեանքը արտադրող և պահպանող սերմով: Բոյսերն աւելի մաքրեցին օդը անյապարար ծծելով նորանում եղած աւելորդ անխաթիւն և խոնաւութիւնը ու կտակելով ապագայ դարերին քարածուխի անհամար մթերքներ: Բոյսերի շնորհիւ մթնոլորտը բոլորովին պարզուեց: Ո՛րքան ժամանակ տեւեց այդ վիճակը՝ Ս. Գիրքը չի յայտնում:

7. Ժամանակը.

Գլ. ա. 14-19: «Լուսաւորներ լինեն»: Ինչպէս տեսանք՝ երկրորդ օրը մթնոլորտը կանոնաւորուեց և շոգիների ահագին քա-

նակութիւն խտանալով ջուր դարձան, հողորդելով իրանց տաքութիւնը շրջապատող օդին: Սա պատճառ եղաւ մթնոլորտի պարզութեան և լոյսի յստակութեան: Իայց գետ շատ շոգիներ կային օդում, որոնք թանձր մշուշ կազմելով՝ արգելում էին Լրկնային մարմինների երևան գալուն: Երբ երրորդ օրը ցամաքը երևաց և բոյսերը կանաչեցին, նորանք աւելի մաքրեցին մթնոլորտը ծծելով նորա աւելւորդ խոնաւութիւնը և անխաթիւն:

Աստուծոյ կարգադրութեամբ այդ գործըն այնպէս և այնքան առաջ գնաց, մինչև որ երկնային մարմինները երևացին երկնաւիճարի վրայ մեր երկրից «չորրորդ օրը»: Այդ մարմինները երևալը նորա համար էր, որ «լոյս տան երկրին», «ցերեկը գիշերից բաժանեն» և «նշանների, ժամանակների, օրերի և տարիների համար լինեն»: Յայտնի է որ ժամանակը չափուած է երկնային մարմինների օգնութեամբ և կենսաբանական ու օգերեւոյթաբանական սրքան բաներում նրանք մեզ նշանների համար են ծառայում:

Առանց ժամանակի հասկացողութեան և չափի՝ մարդկային կեանքը շփոթ և անտանելի կը լինէր: Օր—երկրի թաւալումը իւր առանցքի շուրջը: Ամիս—լուսնի պտոյ-

աւր երկրի շուրջը: Տարի—երկրի շրջանը
արեւի շուրջը: Որքան տեւեց այդ ժամանա-
կամիջոցը՝ Ս. Գիրքը չի յայտնում:

8. Բնագոյր (կենդանիներ).

Գլ. ա. 20-23: «Զեռուաններ, թռչուն-
ներ, սողուններ»: Արեգակի լոյսը իւր բո-
լոր գորութեամբ երկրի վրայ թափանցելուց
յետոյ, որ տեղի ունեցաւ չորրորդ օրը, ար-
դէն թէ օդը և թէ ջուրը մաքրուել և յար-
մարուել էին շնչաւորների այն կազմին, որ
մեզ ծանօթ է մինչև հիմա: Օդը թռչուն-
ների, իսկ ջուրը՝ սողացողների համար
պատրաստ էր իրրեւ բնակավայր: Զրային
կենդանիները և օդի թռչուններն ստեղծ-
ուեցին «հինգերորդ օրը» և կազմութեամբ էլ
բաւականին մօտ են իրար. սակայն նո-
րանք ստեղծուեցին իրանց տեսակի պէս.
այսինքն՝ մէկը միւսից չ'յառաջացան բնա-
կան ճանապարհով: Նորանք աճելու և բազ-
մանալու կարողութեամբ ստեղծուեցին:

Գլ. ա. 24-25: «Անասուններ, սողուն-
ներ, գազաններ»: «Վեցերորդ օրը» ցամաքն
էլ պատրաստ էր կենդանիների համար
իրրեւ բնակատեղի: Ցամաքի կենդանիներն
էլ կազմութեամբ շատ նման են միմեանց,
բայց ստեղծուել են իրանց տեսակի պէս:

Սորանք էլ աճելու և բազմանալու
կարողութեամբ օժտուած ստեղծուեցին:
Մենք էւօլիւցիան (բարեշրջութիւն) չենք
յարգում այն մեկնութեամբ, որ բոյսերի և
կենդանիների բոլոր տեսակներն առաջա-
ցած է համարում միայն մի տեսակից կամ
սերմից. այլ այն մեկնութեամբ՝ որ իւրա-
քանչիւր նախնական տեսակի զարգացում
և պէսպիսացում ամփոփում է իւր յատկա-
ցեալ ծրի մէջ: (Նախատիպ տեսակների որո-
շումը գիտութեան գործն է):

Մեր կարծիքով «ամեն մարմին միև-
նոյն մարմինը չէ» և երբէք չ'ապացուցուեց,
որ մարդիկ երբ և իցէ «փշերից խաղող և
տատասկից թուզ քաղեն», թէև միևնոյն
ժամանակ գիտենք, որ շատ բարի և գիտուն
մարդիկ հակառակն են պնդում:

Բայց կենդանիների մէջ հետաքրքրու-
թեան արժանին այն երեոյթն է, որ ընդ-
հանուր խօսքով կոչւում է բնագլ և որը
շատ կամ քիչ չափով միշտ յայտնւում է
բոլոր կենդանիների մէջ:

Բնագլը կենդանիների համար բռնում
է իմացականութեան, զգացողութեան եւ կամքի
տեղը, որոնք յատուկ են միայն մարդուն:

Բնագլն իր նպատակին բոլորովին
անզէտ զրեթէ մեքենական մի գործունէու-

թիւն է, երբեմն մինչև մի որոշ աստիճան մշակման և դարգացման ենթակայ, բայց միակողմանի: Բնազգը մի անձնաւոր և պարզ գոյացութեան ստորոգելի (յատկութիւն) չէ և առանձինն գոյութիւն չունի. նա կենսական սկզբունքի մի որոշ եղանակաւորումն է. այս պատճառով էլ կենդանութեան քայքայման հետ ինքն էլ գոյութիւնից դադարում է: Բնազգն Աստուած եղանակաւորեց կենդանութեան մէջ հէնց նորա ստեղծութեամբ օրը:

9. Մարդը (նոզի).

Կարգալ կարգով Ծնն. ա. 26. բ. 7-9. 15-17. 19-20, 18, 21-24. ա. 27-30. բ. 25:

Գլ. ա. 26. «Մեր պատկերով... մարդ ստեղծենք»: Մեր երկիրն այդ ժամանակ բոլորովին պատրաստ էր մարդի բնականութեան համար: Աստուած հողից ստեղծեց մարդուն. ուստի մեր մարմնի կազմութիւնը մերտ կապ ունի երկրի նիւթի հետ: Նորանից ստեղծուեց, նորանով սնոււմ է և զէպի նորան դառնում: Մեր մարմնի կազմութեան մէջ նիւթից բացի ոչինչ գոյութիւն չունի. միայն թէ մարմնի կազմութեամբ հրաշալի է: Անպարճարանաւոր մարմինների կազմութեամբ մասնիկների շարակցութիւն է այս կամ


այն ուղղութեամբ և դիրքով. բոյսերի կազմութիւնն աւելի բարդ է. կենդանիներինը՝ մտածութեան արժանի. բայց մարդունը՝ սքանչելի և հրաշակերտ: Թէև այսքան բարդ և սքանչելի կազմութեամբ, բայց և այնպէս սոսկ նիւթ է և նիւթին պիտի դառնայ մինչև որ «այս ապականացուն անապականութիւն հագնի և այս մահկանացուն անմահութիւն»: Որովհետեւ մեր ֆիզիկական կեանքը և կազմութիւնը, ինչպէս և կենդանիների բնազգը, յարմար են միայն մերինն նման աշխարհներին ու եղանակաւորութեամբ նիւթի և ուժի պայմանաւորումներով, ուստի և հանդերձեալ աշխարհի մասը չեն կարող կազմել:

Բայց մարդուս մէջ ամենահրաշալին նոզին է: Աստուծոյ պատկերն այստեղ է երևում: Մարդն ունի գիտակից իմացականութիւն (բան), զգացում (խիղճ) և կամք: Բան, խիղճ, կամք՝ ահա այն կարողութիւնները, որով նա Աստուծոյ պատկերն է լինում: Այս կարողութիւններով է, որ նա իշխում է բովանդակ բնութեանը. այլապէս նա գերի է բնութեան և աւելի ստոր քան կենդանիները: Ահա այստեղ առաջին անգամ մեր հոգագնտի վերայ երևան է գալիս բանական կոչութեամբ արարածը՝ Ադամը—որովհետեւ Ադամ նշանակում է մարդ—որը

կարող է գիտենալ, զգալ և կամենալ և իւր գիտեցածն էլ իմանալ: Մինչև վեցերորդ օրուայ ստեղծագործութիւնը նիւթի և ուժի մէջ չ'կար մի բան, որ աղամ արտադրէր: Այստեղ նորից աստուածային միջամտութիւն՝ չ'եղածն ստեղծելու: Մարդն էլ ստեղծուեց իր տեսակի պէս. արու և էգ ստեղծուեց: Այսպէս ահա՝ Աստուած արարչագործեց նիւթը և ուժը, յարգարեց միջնորդը, սահմանեց ժամանակը, եղանակաւորեց կեանքն ու բնագլը և ստեղծեց մարդի մէջ հոգին: Ամեն անգամ, երբ այս բաներն ստեղծուեցին, մէջ էր գալիս մի բնորոշին նոր բան, որ նախորդները չ'ունէին և երբէք չէին կարող ունենալ առանց աստուածային միջամտութեան: Ամեն անգամ մի չ'եղած բան գոյ էր լինում. մի ոչ է, լինում էր է: Աստուած ամեն բան ստեղծեց չ'եղածից—ոչնչից (Հոտմ. դ. 17) իւր խօսքով—Բանով—և նոյն խօսքով պիտի ստեղծի «նոր երկինք և նոր երկիր»: Նա տուեց նոյն խօսքի ուժը և մարդուն. ուստի և մարդը բանաւոր է և ոչ անբան, ինչպէս են միւս բոլոր իրերը: Մարդս էլ իւր խօսքով է ամեն ինչ ստեղծում երկրի վրայ և իշխում նորան. այո, իւր խօսքով, իւր բանով: Բան՝ ահա մարդու յատկանիշը. Բան և Խիղճ՝ ահա Աստուծոյ պատկերը մարդու մէջ. ազատ և գիտակից կամք՝ ահա մար-

դու փառքը և իշխանութիւնը: Մարդու հոգին անձնաւոր և պարզ գոյացութիւն է ու նորա ստորոգելիքներն են զիտեմալ, զգալ և կամենալ. ուստի և մարմնի քայքայման հետ նա չի քայքայւում, ինչպէս կենդանիների բնագլը, այլ նիւթից անկախ ապրում է նոյն ստորոգելիքներն ունենալով նաև մահուանից յետոյ:

Բ. գլխի պատմութիւնից երևում է որ առաջ Ադամն ստեղծուեց և ապա Եւան՝ մի որոշ ժամանակ անցնելուց յետոյ: Բազմանալու կարողութիւններով ստեղծուեցին նորանք հէնց զբախտում: Մարմնի և հոգու անթերի կազմութեամբ և առողջ ու կատարեալ վիճակի մէջ ստեղծուեցին նորանք: Թէև անմեղ՝ բայց փորձութեան ենթակայ և ազատակամ ստեղծուեցին: Նորանց ֆիզիկական զբաղումն էր Եգեմի մշակումը և պահպանելը: Մարդն ստեղծուեց բարոյական բնութեամբ. ուրեմն բարիի և չարի մասին որոշ գաղափար ունէր նախ քան անկումը, թէև մեղքի հետեանքների մասին փորձնական գիտութիւն չ'ունէր: Օրկ. գիտէր որ Աստուծոն հնազանդելը բարի է և իւր սրբազան պարտքը, իսկ անհնազանդութիւնը չար է և մերժելի. բայց թէ անհնազանդութիւնից ինչ սոսկալի չարիքներ պիտի ծնէին, տգէտ էր այս բանին: Մի-



այն գիտէր որ Աստուած ասաց՝ «Կը մեռնես», որի մասին ինքը փորձնական գիտութիւն ունեցաւ կենդանիների մահը տեսնելով և ուսումնասիրելով: Եթէ Ադամը չարի և բարիի մասին գիտութիւն չունենար, այն ժանանակ նորան մեղք չէր համարուիլ անհնազանդութիւնը և գաղափար չէր կարող կազմել այն ծառի մասին, որի անունն էր «ծառ գիտութեան բարիի և չարի»:

Գլ. ա. 29-30: Բոյսերը և նորանց պտուղները արուեցին մարդուն և կենդանիներին իրրեւ կերակուր: Շնչաւորների մարմինը բաղկացած է հանքային հում նիւթերից և զաղիւրից: Բայց շնչաւորը չի կարող բնգունել այդ նիւթերն այնպէս, ինչպէս նորանք գտնուում են բնութեան մէջ: Ուստի՝ Աստուած այդ գործը յանձնեց բոյսերին, որոնք իրանց բնական խոհանոցներում պատրաստում են մեր մարմինն պէտք եղած սնունդը: Ուրեմն Ադամի մարմինը սնունդի կարօտ ստեղծուեց. իսկ ամեն մարմին, որ կարօտ է նիւթական սնունդի (չրի, օգի, կերակրի), մահկանացու է: Ուրեմն Ադամի մարմինը մահկանացու էր և շնչաւոր (ա. Կոր. Ժե. 44, 45): Թէև առողջ, տոկուն և մեղքի հետեանքներից ազատ, բայց ենթակայ յոգնութեան, ծերութեան

և մահուան: Սակայն՝ մահը չ'պիտի գար նորանց, մինչև որ մարմինը բնական ճանապարհով ծերանալով բոլորովին անբնդունակ չը լինէր ապրելու: Բայց՝ ինչպէս երեւում է, մահը պիտի խափանուէր «կենաց ծառից» ուտելով և մարդն անմահութիւն հաղած՝ ինչպէս յարուցեալ մարմինը, պիտի փոխադրուէր երկինք:

Ինչ անմեղ վիճակ, փառաւոր խոստում և երջանիկ ապագայ, որից զրկուեց մարդը և որը վերստանալու համար մեռաւ և յարեաւ Քրիստոս:

Ծանօթ. Երկու ծառերն էլ միայն պայմանական նշաններ էին և ինքն ըստ ինքեան ոչ մի դիւթական կամ հրաշագործ գորութիւն չունէին իրանցում, այլ սովորական ծառեր:

10. Ահաշուրեան ժամանակամիջոցը.

Վէճի տակ է ստեղծագործութեան ժամանակի խնդիրը: Արդեօք, քսանուչորս ժամերից բաղկացած վեց օրերի մէջ ստեղծեց Աստուած երկիրը, թէ վեց անորոշ շրջանների՝ որոնք «օր» բառով են արտայայտուած Ս. Գրքում: Առաջինի համար իրբն փաստ ծառայում է Ս. Գրքի տառական, պարզ ոճը. «և եղաւ երեկոյ և եղաւ ուրախ օր առաջին... օր երկրորդ... օր տեր-

բորդ... են»։ Իսկ վերջինի համար իբրև փաստ ծառայում են ներկայ գիտութեան տուեալները, որոնց մեկնութեամբ՝ շատ տարիներ էին պէտք մեր երկրի պատրաստութեան համար։

Մենք կաշխատենք նոյն արարչութեան պատմութիւնից թելադրել «օր» բառի հաւանական իմաստը ներկայ խնդրիս նկատմամբ. այսինքն՝ քսանուչօրս ժամուայ՝ թէ նորանից աւելի ժամանակամիջոցի համար է գործածուած այստեղ «օրը» (թէ՛ որքան աւել, ներկայ գէպքում շատ կարևոր չէ)։ Սորա համար վերցնենք այն պատմութիւնից հրեք պարագայ։

1. Ծնն. ր. 4,5։ Այստեղ նկարագրւում է երրորդ օրուայ առաջին երեոյթը. այսինքն՝ ցամաքի ու ջրերի բաժանումը և ցամաքի չորանալը՝ խոնաւութեան շոգիանալով։ Այս ժամանակի համար ասուած է թէ՛ անձրև չէր գալիս, այլ գետնից շոգի էր բարձրանում ու երկրի երեսը ջրում։ Արդ՝ ամենարհական մեկնութեամբ թելադրւում ենք այս խօսքը չհասկանալ քսանուչօրս ժամից բաղկացած օրուայ համար, որի մասին հարկ լինէր պատմել թէ՛ Աստուած տակաւին անձրև չէր բերել երկրի վերայ և թէ՛ գետնից շոգի էր բարձրանում ու երկրի երեսը ջրում։ Այն էլ օրուայ առաջին

մասի համար միայն. որովհետև երկրորդ մասում արդէն բոյսերն են ստեղծւում։ Անիմաստ խօսք կը լինէր մի քանի ժամուայ համար ասել թէ՛ Տէր Աստուած տակաւին անձրև չէր բերել երկրի վրայ և թէ՛ շոգին էր ջրում երկրի երեսը։

2. Ծնն. ր. 19,20։ Աստուած Ազամին դրեց եղեմի պարտէզը և երկրի բոլոր կենդանիներին ու երկնքի բոլոր թռչուններին (որ այդ ժամանակ ապրում էին նոյն կլիմայի տակ և նոյն տեղում, ուր ապրում էր Ազամը) բերեց նորա մօտ, որ նորանց անուն դնէր։ Եւ Ազամն ինչ անուն որ դրեց այն եղաւ նորա անունը. այսինքն՝ անունը յարմար էր և հարկ չ'կար սխալն ուղղելու։ Արդ՝ որքան ժամանակ էր հարկաւոր Ազամին բոլոր կենդանիներին յարմարաւոր անուններ դնելու համար։ Ազամի բառարանն, ի հարկէ, այնքան ճոխ չէր, ինչպէս հիմա մերն է։ Նա կենդանիներից և թռչուններից (ի հարկէ և բոյսերից) շատերին կարող էր միայն մի անուն տալ։ Օրկ. ինչպէս ճնճղուկ բառով՝ ճնճղուկների բոլոր տեսակները։ Եւ որովհետև այն ժամանակուայ տեսակներն այնքան շատ չ'էին, ինչպէս հիմա, ուստի և անուն դնելը շատ ժամանակ չէր պահանջիլ։ Բայց և այնպէս, միքանի պարագաներ աչքի առաջ ունենա-

լով՝ թեղադրում ենք ընդունել, որ Աղամբ քսանուչորս ժամում չէր կարող բոլոր կենդանիներին և թռչուններին անուն դնել, եթէ մինչև անգամ առանց շունչ առնելու մէկ, երկու... համարէր: Անհրաժեշտ էր մի փոքր դիտել, քննել և միմեանցից տարբերել նորանց: Ուստի՝ ամենաշնորհալի մեկնութեամբ, Աղամբ այնքան ժամանակ ունեցաւ զբախտում, որ կարողացաւ լաւ ուսումնասիրել թէ՛ կենդանիներին և թէ՛ թռչուններին (ինչպէս և բոյսերը), դիտելով նորանց կենցաղը և այլ երևոյթները ու նորանց գոյնի, ձայնի, բնաւորութեան, կենցաղի, մարմնի կազմութեան և այլ պարագաների համեմատ նորանց անուն դրեց: Անբնական է քսանուչորս ժամից բաղկացած ժամանակի ընթացքում Աղամբին այսքան ծանրակշիռ գործ կատարել տալ, եթէ՛ ինչպէս ասացինք, անուն դնելը պահանջում է այսքան գործնական հմտութիւն և փորձառութիւն, որ անհրաժեշտ է. մանաւանդ որ Աղամբի գրած բոլոր անունները նշանակութիւն ունէին և միշտ գործողութիւն կամ կարճ նախադասութիւններ էին, որին վկայում է կեղուադիտութիւնը:

3. Ծնն. բ. 21, 22: Այստեղ պատմուած է մի նոր ստեղծագործութիւն, որ տաջ եկաւ անհրաժեշտ կարիքից: Աղամբ

բաւական ժամանակ մենակ աղբից և ժամանակ ու պատենութիւն ունեցաւ ուսումնասիրելու բոյսերի և կենդանիների կեանքը: Մանաւանդ առանձնապէս նրա ուշադրութիւնը գրաւեց կենդանաց զոյգերի սէրը, ծնելը և ձագեր սնուցանելը (ա. 22), որն առիթ տուեց նորան տրամելու. որովհետեւ իր նմանը չ'գտնուեցաւ նորանց մէջ— իրան մենակ զգաց: Աղամբ իւր և կենդանիների մէջ հէնց սկզբից կատարեալ և որոշ տարբերութիւն նկատեց— իր նմանը չկար նրանցում: Եւ ահա այն ժամանակ, երբ Աղամբ այդ խորհուրդներով յոգնած՝ խոր քուն էր մտել, Աստուած ստեղծեց նորա նմանը— Եւային: Չմոռանանք որ Ս. Գիրքը մարդու ստեղծագործութեան երկու ջոկ գէպեր է յիշատակում:— Ուրեմն Աղամբի զանգատը թէ՛ «այն կինը, որ դու տուիր ինձ, նա ինձ տուեց և ես կ'երայ», բացարձակ զրպարտութիւնէր. պէտք է ասել. այն կինը, որի պէտքն զգացի, որի համար տրամեցի, որը փափագեցի ունենալ և որը տրուեցաւ ինձ իմ բուն ցանկութեան համար, որ ինձ օգնական և մխիթարող լինի, նա ինձ խաբեց:

Իսկ այս ամենը գրուած է, որ տեղի ունեցաւ վեցերորդ օրը: Արդ՝ ցամաքային կենդանիների և Աղամբի ստեղծումը, Եգեմի

պատրաստութիւնը, նորա մշակման և պահպանութեան հոգը, արգելեալ պտղից չնուտելու պատուէրը, բովանդակ բնութեանը տիրելու հրամանը, թռչուններին և կենդանիներին անուն գնելու փորձը, Ադամի ինքնաճանաչութիւնը և Եւայի ստեղծումը գրուած է որ տեղի ունեցաւ վեցերորդ օրը: Այս նկարագրութեանից մենք թելադրուում ենք եզրակացնել՝ որ և վեցերորդ օրը քսանուչորս ժամից բաղկացած ժամանակի համար չի կարելի հասկանալ: Արդ՝ եթէ 3-րդ և 6-րդ օրերը՝ նոյն իսկ Ս. Գրքի ամենաբնական մեկնութեամբ թելադրուում ենք ընդունել քսանուչորս ժամից աւելի ժամանակ, ինչու միւս օրերն էլ այնպէս չ'հասկանալ:

Այս մեկնութեամբ «երեկոյ և առաւօտ եղաւ» խօսքը կարելի է ընդունել իբրեւ անորոշ թիւ. այսինքն՝ «երեկոյ և առաւօտ եղաւ», դարձեալ «երեկոյ և առաւօտ եղաւ». մի խօսքով՝ «երեկոներ և առաւօտներ եղան» առաջին օրը, երկրորդ օրը ևն.:

11. Ասեղծագործութեան երեք մեկնութիւններ.

1. Արարիչ Աստուած չ'կայ. նիւթը և ուժը ի յաւիտենից կան. ամեն բան առաջացաւ նորանց միացեալ գործունէութիւ-

նից էւօլիւցիայի օրէնքով՝ առանց Արարչի: Այս մեկնութիւնը բացկիրաց մերժում ենք. որովհետեւ սխալ է, ուրանում է ապացուցուած ճշմարտութիւնները և դէմ է ճշմարիտ հաւատքին:

2. Արարիչ Աստուած կայ. ամեն բան ստեղծուել է Արարչի կամքով. Աստուած ստեղծեց միայն նիւթը և ուժը, բայց օժտեց նորանց այնպիսի կարելիութիւններով, որ նորանք ժամանակի ընթացքում ամեն ինչ արտադրեցին էւօլիւցիայի օրէնքով՝ առանց այնուհետեւ Արարչի անհրաժեշտ միջամտութեան: Այս մեկնութիւնը ճշմարիտ հաւատքին դէմ չէ և կարող է ուղիղ լինել. նորա դէմ միակ առարկութիւնը սա է որ ապացուցուած չէ:

3. Արարիչ Աստուած կայ. Նա ստեղծեց տիեզերքն այն կարգով, որ պատմեցինք այստեղ: Թէ ինչու ենք այս մեկնութիւնն յարգում առայժմ, գորա մասին կը խօսենք մի առանձին գրքով:

12. Աստուծոյ հանգիստը.

Կարգաւ Ծնն. գ. 1-24:

Գլ. բ. 1-3: «Եւ Աստուած օրհնեց եօթներորդ օրը և սրբեց այն. որովհետեւ նորանում հանգստացաւ իր բոլոր գործե-

րից»։ Սորանք մարդկային բացատրութիւններ են։ Աստուծոյ հանգիստը Փիղիկական կամ մտաւոր յոգնածութեան կազդուրում չէր. այլ նշանակում է թէ՛ Աստուած իր արարչական գործին վախճան տուեց։ Իր ծրագիրն իրագործեց և այնքան կատարեալ կերպով, որ աւելին գործելու հարկ չկար։ Աստուած տեսնելով, որ բոլորը բարի է, վայելուչ և մարդու երջանկութեանը կատարելագէտ նպատաւոր, «օրհնեց և սըրբեց» հանգստեան օրը. այսինքն՝ մարդու երջանկութեան համար «աշխարհիս սկզբից հետէ պատրաստուած» թէ՛ ներկայ և թէ՛ հանդերձեալ հանգիստը։

Աստուծոյ հանգիստը. այս իմաստի մէջ խտացած է յաւիտենական դարերի անթերի երջանկութիւնը, աստուածային իմաստութեան և բարութեան հայթայթած և յարդարած երանաւէտ կեանքը։ Մարդուս ներկայ և հանդերձեալ կենաց՝ երջանկութիւնը կատարեալ անելու համար՝ Նորա իմաստութիւնը և սէրը ոչինչ չէր թողել թերի, նոր անելիք չկար այլեւ։

Պէտք եղած պատուէրը և հրահանգը մարդուն տալուց յետոյ, վերջինիս վրայ էր ծանրանում իր ներկայ և հանդերձեալ հանգիստ (երջանկութիւնը) ապահովելու հոգը։ Իսկ սորա համար հարկաւոր էր միայն

հնազանդել և վստահել Աստծուն՝ Նորա շնորհքին յանձնուելով։

Եւ ինչ օրհնեալ հանգիստ։ Եղեմական երանաւէտ և անմեղ կեանք. օրդիական օրըալիւր հազօրդակցութիւն Աստուծոյ հետ. դիւրին և հաճելի զբաղմունք ներկայ կեանքում։

Բայց միայն սորանք չէին կազմում այն խոստացեալ հանգստի տարրերը. սորանք միայն օրինակ և առհաւատչեայ էին այն փառաւոր հանգստեան, որ հանդերձեալ էր գալու՝ կենաց ներկայ վիճակը փոխուելուց յետոյ։

Բայց աւագ. Ադամը շուտ զրկուեց այն հանգստից իր առհաւատութեան պատճառով։ Կորցրեց զբախտի երջանիկ կեանքը, մերժուեց աստուածային քաղցր հազօրդակցութիւնից և մատնուեց մահուան ու մեղքի անէծքին։

Այնուհետեւ ցաւով պիտի ծնէին, նեղութիւնով և քրտինքով շահէին ու մահով գերեզման իջնէին։

Սորանց հետ միասին կորցրին նաև հանդերձեալ կեանքի օրհնեալ երաշխիքը։

Սակայն... Ո՛վ աստուածային սէր և իմաստութիւն, Արարիչը չթողեց մարդկային սեռը թշուառութեան մատնուած։ Նա

կրկին հայթայթեց նորա համար փրկութեան հնարաւոր և արդար միջոց—ապահովեց նորա հանգիստը: Աստուած խոստացաւ փրկել աշխարհը կենդ սերնդի (Քրիստոսի) միջոցով և այս միջոցաւ (Քրիստոսի) միջոցով և այս միջոցաւ յիշատակելու համար սահմանեց և պատուիրեց արիւնոտ զոհաբերութիւնը մինչև որ կենդ սերունդը խաչի քաւութիւնով ապահովէ Աստուծոյ հանգիստը մտնելու այն «նոր և կենդանի ճանապարհը»: Այն, զեւ ֆնում է մի արարչութիւն, կատարուելիք մի սքանչելի գործ, խոստացեալ մի նոր հանգիստ Աստուծոյ զաւակների համար: Աշխարհի ներկայ կազմը պիտի փոխարինուի հանդերձեալ բարիքներով, որ Աստուած խոստացել է Քրիստոսով: Աստուծոյ խոստումներն անփոփոխ են և կատարեալ. կայ և ֆնում է տակաւին նոյն հանգիստը, որի մուտքն ապահովուած է մեր սիրելի Փրկչի քաւութիւնով:

«Որովհետեւ այս շարժուող բաներն իբրեւ եղածներ, պիտի փոխուեն, որ հաստատ ֆնան անշարժները...» (Եբր. Ժբ. 27-29): Քանզի Նորա խոստումն է. «Ահա ես նոր երկինք և նոր երկիր եմ ստեղծում և առաջիններն այլեւս չպիտի յիշուեն և մարդու միտք չպիտի գան. այլ դուք պիտի ուրախանաք և բերկրէք յաւիտեանս յաւի-

տենից իմ ստեղծագործութիւնով...» (Ես. Կե. 17-25): Ուստի՝ «Նորա խոստման համաձայն նոր երկինքի և նոր երկրի ենք սպասում, որոնցում արդարութիւն է բնակուում» (Բ. պետ. գ. 11-13): Ուրեմն՝ «Խնչպէս պէտք է դուք գտնուէք սուրբ և աստուածապաշտ վարքում՝ սպասելով և շտապելով Տիրոջ գալստեան օրուանը, որում երկինքները կրակով այրուած պիտի լուծուին և տարերքը կրակ բռնկած պիտի հալուին» (Բ. պետ. գ. 11-13): Ուստի «զգոյշ կացէք, որ չմերժէք Նորան, որ խօսեց. որովհետեւ եթէ չկարողացան պրծնել երկրիս վրայ պատգամ տուողին (Մովսէսին) մերժողները, որքան աւելի ապա մենք, եթէ երկնքից խօսողին (Քրիստոսին) մերժենք» (Եբր. Ժբ. 24-27):

Այն. կը գայ մի օր, երբ մեր երկրի վրայ կատարուած իւրաքանչիւր գործ Նորա իմաստուն նախախնամութեամբ պիտի նպաստէ Քրիստոսի թագաւորութեան գալստեանը և Աստուած (ի ձեռն Քրիստոսի) կաւարտէ Իր երկրորդ ստեղծագործութիւնը. երբ մեզքը իւր բոլոր հետեւանքներով պիտի վերանայ մեր աշխարհից ու թագաւորէ նորա տեղ երջանիկ և սուրբ կեանքը. երբ մեր ներկայ վիճակն ու կազմը կը փոխուեն և ամեն բան կը

յարմարուի հանդերձեալ (գալիք) աշխարհի
երանաւէա կեանքի պայմաններէն. երբ բո-
ցեղէն սուրբ կը վերանայ զրախտի սահ-
մաններէց և մեզ իրաւունք կը տրուի «զըռ-
ներից ներս մանել» և «կենաց ծառից ու-
տել» յաւիտեանս երջանիկ լինելու համար:
Այն ժամանակ ահա «Տէր Աստուած պիտի
սրբէ ամեն արտասուք մեր աչքերից... և
այլ ևս մահ չի լինիլ ոչ սուգ, ոչ աղաղակ,
ոչ ցաւ». ու այնտեղ, այն սուրբ բնակա-
վայրը, այն բաղձալի եղբայրութեան մէջ,
այլևս չի մտնիլ «ոչ մի անմաքրութիւն
անող և պղծութիւն ու ստութիւն գործող»,
այլ ամենքս էլ Աստուծոյ հրեշտակների
նման կը լինենք յաւիտեանս երջանիկ ան-
մահութիւն հագած: Ահա սա է Աստուծոյ
հանգիստը: Ուրեմն «ջանք անենք այն հան-
գիստը մտնելու» (Եբր. դ. 11). որովհետեւ
«Նորա հանգիստը մտնողն ինքն էլ հան-
գատացաւ իր գործերից, ինչպէս Աստուած
էլ իրաններից» (Եբր. դ. 10): Ահա թէ ին-
չուն է կայսնում արարչութեան նպատակն
ու գաղտնիք:



ՀՀ Ազգային գրադարան



NL0157816

